

321

n-63

1972

118

✓ 13325

NOV 2008

Հրատ. ՅՈՎՀ. ԱՍԼԱՆՆԱՆԻ

Ն. Ա. ԲՕԺԿՈՎ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹԵԱՆ

ՁԵԻԵՐԻ ՄԱՍԻՆ

Թուս. թարգմ. ԲԱՐԿԷ



100
00

321
Ռ-63

Թ Ի Փ Լ Ի Ս

Տպարան «ՀՅՐԱՒԷՍ» Գրաճակարկ № 6.
1912

26 SEP 2006
EPOS 2A 4 S

0.50

2
3
4
5
P. (P. ...)

Հրատ. ՅՈՎՀ. ԱՍԼԱՆՆԱՆԻ

12-63

Ի մարտի 1912 թ. հունիսի 15-ին
Հանրային գրադարանի կողմից
գրքի համար Ն. Ա. ԲՈՒԿՈՎ
համարված և գրադարանից հանձնված:

84

108
300

1660-10

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹԵԱՆ

ՁԵՒԵՐԻ ՄԱՍԻՆ

1003
12485

Ռուս. թարգմ. ԲԱՐԿԷ



Թ Ի Փ Լ Ի Ս

Տպարան «ՀԵՐՄԷՍ» Գրաճակայա № 6.
1912

Ժողովրդուն ներկայացուցչության շեղումը

Ժողովրդական ներկայացուցչության ձևերի հարցը բաւականին բարդ է: Այդ հարցը կանոնաւոր կերպով վճռուելու համար՝ պէտք է քննել երեք առանձին հարցեր, որոնց վրայ էլ նա բնականաբար բաժանուում է. 1) ներկայացուցչության որպիսի ձևեր գոյութիւն ունէին և ունենայում. 2) ինչպիսի պայմաններում են ծնունդ առնում ժողովրդական ներկայացուցչության տարբեր ձևերը. 3) ներկայացուցչության որպիսի ձևերն են յատուկ դեմօկրատական պետութեանը:

Քննելով առաջին հարցը, պէտք է նկատել, որ ժողովրդական ներկայացուցչության չորս հիմնական ձևեր գոյութիւն ունէին ընդհանրապէս և այժմ էլ ունեն, որոնք են՝ արիստոկրատական կամ արիւնակցական, դասային, ցէնզային և ընդհանուր ընտրողական իրաւունք:

Արիստոկրատական ներկայացուցչութիւնը կոչւում է այնպիսին, որը հիմնւած է ամենանշանաւոր կամ ընդհանրապէս արտօնեալ ընտանիքների՝ մեծերի ներկայացուցիչ լինելու վրայ, որոնք ներկայացուցչության իրաւունքը ստանում են ոչ թէ ժողովրդի ընտրութեամբ, այլ ժառանգաբար: Այդպիսի արիստոկրատական ներկայացուցչութեան օրինակը այժմ հանդիսանում է անգլիական լօրդերի պալատը (խորհուրդ), որը բաղկացած է լօրդերից կամ թագաւորական պէրերից, ամենանշանաւոր ազնուական ընտանիքների մեծերից և եպիսկոպոսներից: Բոլոր լօրդերը՝ ժառանգական օրէնադիրներ են, և պալատում ունեցած իրենց տեղերը յանձնում են իրենց մեծ որդիներին: Հասա-

Ժողովրդական

Ներկայացուցչություն

Պատմություն

Պատմություն

բակութեան կողմից լիազօրներ տալը՝ ընտրութիւնների միջոցով գոյութիւն չունի այստեղ:

Ներկայացուցչութեան երկրորդ ձևը հանդիսանում է ղաասային ներկայացուցչութիւնը, որտեղ, ինչպէս և ստորին դասերում, գոնէ մասամբ, ընտրութիւններ կան. քայց նրանք ըստ դասերի են կատարւում, որի համար էլ իւրաքանչիւր դասի ներկայացուցիչները սովորաբար առանձին ժողով են ունենում, դասերի համաձայն ձայն տալիս, և բոլոր հարցերը վճռում են ոչ թէ ներկայացուցիչների ձայների, այլ դասերի ձայների մեծամասնութեամբ: Եւ այսպէս, միջնադարեան Փրանսիայի դասային—ներկայացուցչական հիմնարկութիւններում, որոնք երեսփոխանական ժողովներ անունն էին կրում (генеральные штаты), մասնակցում էին երեք դասերի ներկայացուցիչները—ազնուականութեան, հոգևորականութեան և մեշչանների (բուրժուազիայի): Իւրաքանչիւր դաս առանձին ժողով էր ունենում և առանձին էլ ձայն էր տալիս, այնպէս որ, եթէ ազնուականութիւնը և հոգևորականութիւնը համաձայն էին լինում իրար, այն ժամանակ նրանց երկու ձայնը ձնչում էր բուրժուազիայի ձայնին:

Դասային ներկայացուցչութիւնը ներկայումս նոյնքան հազուադիւր է, որքան և արիստօկրատական ներկայացուցչութիւնը: Նա աւելի կամ նուազ մաքուր ձևով պահպանուել է, օրինակ՝ Փինլանդիայում: Այստեղ սէյմը չորս դասային խմբերից է կազմուած—ազնուականութիւն (ազնուականները մասնակցում են ոչ թէ ընտրութեամբ, այլ մարդագլուխ (ПОГОЛОВНО), այստեղ արիստօկրատական ներկայացուցչութիւն է), հոգևորականութիւն և քաղաքացիներից ու գիւղացիներից ընտրուածները: Դասային ներկայացուցչութեան հիմքում ընկնում է մի այնպիսի հասարակական կազմ, որի մէջ հասարակութեան առանձին խմբերը իրարից տարբերւում են իրաւաբանական յարա-

բերութիւններով—իրաւունքով և պարտականութեամբ: Իրաւաբանական այդպիսի տարբեր խմբերը կոչւում են դասեր:

Սակայն հասարակութիւնը կարող է դարձալ դասակարգերի, այսինքն՝ խմբակների բաժանուել, որոնք իրարից զանազանւում են այն դրութեամբ, որը նրանք զբաւում են արտադրութեան և տնտեսական բարիքների փոխանակութեան մէջ: Եւ այսպիսով՝ դասակարգ են հանդիսանում հողատէրերը, հողագործները, ֆաբրիկանաները, բանւորները և այլն: Զանազան դասակարգեր, ըստ իրենց ունեցուածքի՝ ապահովութեան տարբեր աստիճաններ ունեն—մէկը հարուստ է, իսկ միւսները՝ աղքատ: Կարողութեան վրայ է հիմնուած ժողովրդական ներկայացուցչութեան երրորդ ձևը—ցէնզային ներկայացուցչութիւնը, որի ժամանակ ներկայացուցիչներ ընտրելու (այսպէս կոչւած՝ ակտիւ ընտրողական իրաւունք) և ներկայացուցիչ ընտրուելու (կրաւորական ընտրողական իրաւունք) իրաւունքից օգտուում են այն անձնաւորութիւնները, որոնք ունեն սահմանուած չափից ոչ պակաս կարողութիւն: Օրէնքով սահմանուած հարստութեան, եկամուտի կամ հասոյթի այն չափը, որն ընտրողական իրաւունք է տալիս՝ կարողութեան ցէնզ է կոչւում: Ցէնզային ներկայացուցչութիւն գոյութիւն ունի, օրինակ՝ Սնգալիայում համայնքների պալատը ընտրելու ժամանակ: Եւ այսպիսով ներգործական ընտրողական իրաւունքից օգտուում են անգլիական այն բոլոր քաղաքացիները, որոնք տարեկան 10 գրով ստերլինգից (մեր փողով մօտ 100 ռ.) ոչ պակաս բնակարանի քրեհ են տալիս: Կարողութեան աւելի բարձր ցէնզ գոյութիւն ունի Բելգիայում, Աւստրիայում, Վենզրիայում, Պրուսիայում և այլն: Ռուսական զեմստային և քաղաքային հիմնարկութիւնները կազմուած են նոյնպէս ցէնզային ներկայացուցչութեան հիմունքների վրայ: Ներկա-

յումս ընդհանրապէս դա ժողովրդական ներկայացուցչութեան շատ տարածւած ձևն է:

Վերջապէս, առանց ամեն տեսակ սահմանափակումների՝ գոյութիւն ունի էլի ընդհանուր, ուղղակի, հաւասար և գաղտնի ընտրողական իրաւունք: Եթէ ներկայացուցչութեան այդ ձևը քննենք իր գաղափարական իմաստով, այն ժամանակ պէտք է ճանաչել, որ «ընդհանուր» տերմինը ներգործական և կրաւորական ընտրողական իրաւունքի տարածումն է ենթադրում բոլորի վրայ՝ առանց սեռի, ազգութեան և դաւանանքի խտրութեան, որոնք (ընտրողները) հասել են միայն որոշ տարիքի: Ուղղակի ընտրողական իրաւունքը լինում է այն ժամանակ, երբ ընտրողները անմիջապէս իրենց քուէարկութեամբ ներկայացուցիչներ են նշանակում, երբ գոյութիւն չունեն այսպէս կոչւած երկաստիճան ընտրութիւններ, որոնք կայանում են նրանում, որ ընտրողները միայն նշանակում են առանձին պատւիրակներ, իսկ այս վերջիններին է պատկանում ներկայացուցիչներ ընտրելու իրաւունքը: «Հաւասար» ընտրողական իրաւունքի տերմինը երկու իմաստով է գործածւում: Նախ՝ նշանակում է այն փաստը, որ ներգործական և կրաւորական ընտրողական իրաւունքից օգտւում են միևնոյն անձնաւորութիւնները (պատահում էր, որ այդպէս չէր լինում, երբեմն նրա համար, որ ներկայացուցիչ ընտրելու համար բարձր կարողութեան ցէնզ կամ բարձր տարիք էին պահանջում.) և երկրորդ՝ հաւասար ընտրողական իրաւունքի ժամանակ՝ իւրաքանչիւր ընտրող պէտք է մի ձայն ունենայ: Եւ այսպիսով՝ հեռացում է այսպէս կոչւած թեր ու դէմ քուէների մեծամասնութիւնը, որ պատահում է՝ Բելգիայում և հարցը կայանում է նրանում, որ մի քանի կարողութեան տէր ընտրողներ, ընտրութեան ժամանակ՝ մի քանի ձայն են ունենում:

Վերջապէս գաղտնի է կոչւում այնպիսի ձայնաւո-

թիւնը ընտրութեան ժամանակ, որով ընտրողը իրաւունք ունի առանց վիճակների, առանձին տեղում իր ընտրողական թերթիկը ներկայացուցչի անունով գրելու, ծրարի մէջ ծրարելու և այնպէս փակ տալու: Այսպիսով անյայտ է մնում, թէ իսկապէս ո՞ւմ է ընտրել այս ինչ ընտրողը, այնպէս որ, վերացւում է ամեն տեսակ կողմնակի ճնշում, ինչպէս օրինակ՝ ընտրողի փոխատուների, նրա տիրոջ ազդեցութիւնը, եթէ նա մասնաւոր մարդու կամ կառավարութեան մօտ է ծառայում և այլն:

Վերջապէս, ընդհանուր ընտրողական իրաւունքն՝ իր լիակատարութեան համար՝ կարիք է զգում էլի ամեն տեսակի այլ սահմանափակումների բացակայութեան, որոնց թուին է պատկանում, օրինակ՝ այն պահանջը, թէ ընտրողը մի քանի ճիշտ որոշւած ժամանակ, օրինակ՝ 3—6 ամիս պիտի ապրի այն վայրում, որտեղ ձայն է տալիս: Դա մասնաւոր անյարմար է բանւորների համար, որոնք իրենց արհեստի պատճառով հարկադրուած են յաճախ փոխել իրենց բնակավայրը:

Ներկայումս ընդհանուր, ուղղակի, հաւասար և գաղտնի ընտրողական իրաւունք գոյութիւն ունի շատ պետութիւններում, — օրինակ՝ Գերմանիայում, Ֆրանսիայում, Հիւսիսային Ամերիկայի Միացեալ նահանգներում և այլն: Սակայն անհրաժեշտ է նկատել, որ նա իր մաքուր գաղափարական ձևով ո՞չ մի տեղ չկայ. նրա գլխաւոր շեղումն այդ գաղափարից կայանում է նրանում, որ կանայք ընտրողական իրաւունքից չեն օգտւում: Միայն Հիւսիսային Ամերիկայի և Նոր-Չիլիանդիայի մի քանի նահանգներում է ճանաչւում կանանց համար ընտրողական իրաւունք, և այն էլ միայն ներգործական (ակտիւ) և ո՞չ կրաւորական: Գանայք ընտրութիւններին մասնակցում են որպէս ընտրողներ, բայց երբէք չեն կարող ընտրել:

Որոշելով ժողովրդական ներկայացուցչութեան չորս

հիմնական տիպերը — արիստոկրատական, դասային, ցէնզային և ընդհանուր, անհրաժեշտ է աւելացնել, որ, բացի այդ զուտ տիպերից, գործնականում գոյութիւն ունեն նաև խառն տիպեր: Ժողովրդական ներկայացուցչութեան այդպիսի խառն տիպերից ամենակարևորն երկպալատեան սիստեմն է հանդիսանում: Ուսումնասիրելով երկպալատեան սիստեմը, պէտք է տարբերել երկու բան: Նախ՝ ունիտարական, կենտրոնական պետութիւններում եղած երկպալատեան սիստեմը. և երկրորդ՝ նոյն սիստեմը՝ աւատական պետութիւններում, որոնք իրենցից մի բանի ինքնավար քաղաքական միութիւններ են ներկայացնում: Երկպալատեան սիստեմը էապէս ժողովրդական ներկայացուցչութեան տարբեր ձևերի կազմակերպութիւնն է ներկայացնում ունիտարական պետութիւններում: Այսպէս, Անգլիայում վերին կամ լորդերի պալատը իրենից ներկայացնում է արիստոկրատական ներկայացուցչութեան պատկերը, իսկ ստորին կամ համայնքների պալատը հիմնուած է ցէնզային ներկայացուցչութեան վրայ: Նոյն իսկ այն ժամանակ, երբ երկու պալատների ընտրութիւնները հիմնուած են լինում ընդհանուր ձայնաւութեան վրայ, այնուամենայնիւ, խնդիրն էապէս չի փոխւում: Ուսումնասիրելով վերին պալատի կազմը՝ այսպիսի դէպքում՝ դիւրին է համոզուել, որ այստեղ ակնյայտնի կերպով կայ ոչ այլ ինչ, եթէ ոչ ծածուկ ցէնզ: Իսկապէս Ֆրանսիական սենատը (պալատը) կազմւում է հետևեալ կերպով. ընդհանուր ձայնաւութեամբ ընտրւում են քաղաքային խորհուրդները (муниципалитетъ), որոնք իրենց ֆունկցիաներով նման են ուսական զեմստվային ժողովներին և քաղաքային դումաներին, իսկ տեղային ինքնավարութեան այդ օրգանները արդէն ընտրւում են սենատորներին: Եւ դուրս է գալիս, որ այդպիսի պարագաներում սենատ են ընկնում համարեա բացառապէս ամենահարուստ բուր-

ժուազիայի ներկայացուցիչները: Այսպիսով՝ երկպալատեան սիստեմը ղեմօկրատական սկզբունքների սահմանափակման երկիմաստ բնաւորութիւնը չունի տարրական պետութիւններում:

Միանգամայն այլ իմաստ ունի երկպալատեան սիստեմը դաշնակցական պետութիւններում: Օրինակ՝ Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներում օրէնսդրական հիմնարկութիւնը — համագումարը — երկու պալատներից է բաղկանում — ներկայացուցիչների պալատից և սենատից: Եւ ներկայացուցիչներն ու սենատի անդամները ընտրւում են ընդհանուր ձայնաւութեամբ, բայց իւրաքանչիւր նահանգի ներկայացուցիչների քանակը որոշւում է նրա բնակիչների թւով, մինչդեռ իւրաքանչիւր նահանգ սենատ է ու ուղարկւում երկու սենատորի: Այդ սիստեմն ոգեւորող իդէան պարզ է: Այդ սիստեմով հաւասարութեան ուղիով՝ կամենում են հաւասարակշռել այն բոլոր առանձին պետութիւնների իրաւունքները վերին պալատում, որոնք մտնում են դաշնակցութեան մէջ:

Այս հանգամանքը լիովին հասկանալի է այն դաշնակցութիւններում, որոնք բաղկանում են քաղաքական այնպիսի միութիւններից, որոնց տերրիտորիայի և բնակչութեան քանակը հազիւ թէ տարբերւում են իրարից: Բայց դա անհնարին է այնտեղ, որտեղ դաշնակցութեան առանձին մասերի մէջ եղած տարբերութիւնը չափազանց մեծ է թէ ըստ հողի տարածութեան և թէ ըստ բնակչութեան թուի: Դրա համար էլ, այդ դէպքում՝ մենք երկու պալատի չենք հանդիպում դաշնակցական պարլամենտներում. այսպէս, օրինակ՝ գերմանական Րէյստագը մի պալատեան ներկայացուցչական հիմնարկութիւն է: Ի միջի այլոց պէտք է նկատել, որ վերին պալատը, համեմատած ստորինի հետ, դաշնակցական պետութիւններում ընդհանրապէս երկրորդական նշանակութիւն ունի և հէնց այս նոյն յարաբերու-

թեան մէջ է գտնուում ամերիկական սենատը ստորին պալատի նկատմամբ:

Անցնենք երկրորդ հարցին՝ թէ ինչնով են ստեղծուում և ինչու են պահպանուում ժողովրդական ներկայացուցչութեան զանազան ձևերը:

Ի՞նչից է ծագում, բարգաւաճում և պահպանուում արխատօրատական ներկայացուցչութիւնը: Նա շատ հին ծագում ունի, բնատնտեսութեան էպօխայից է ծագում և այսպիսով՝ այդ էպօխայի այն շրջանից, երբ տնտեսական կեանքում գլխաւոր դերը խաղում էր ոչ թէ երկրագործութիւնը, այլ հում նիւթեր ձեռք բերող արդիւնաբերութիւնը (добывающая промышленность) — որսորդութիւն, ձկնորսութիւն և մեղաբուծութիւն: Իւրաքանչիւր ընտանիք առանձին էր կառավարում, որպէս զի ուրիշին չէր խանդարէ տնտեսական յարաբերութեան մէջ: Աշխատանքի բաժանումը գոյութիւն ունի միայն իր ընտանիքի սահմաններում. առևտուր համարեա չկայ. բոլոր անհրաժեշտ իրերը ձեռք էր բերում ընտանեկան միութիւնը՝ իր անդամների աշխատակցութեամբ. նա ոչ մի բան չէր առնում և ոչ էլ ծախում: Ահա թէ ինչու այդ էպօխայում անհատը կուլ է գնում ընտանիքին, և որ իրական քաղաքական ոյժը ընտանիքն է: Այս տեղից առաջանում է արիւնակցական ներկայացուցչութիւնը ժողովրդական ժողովում կամ վէչէում, որտեղ վճռողական ձայնից օգտուում են միայն ընտանիքների գլխաւորները: Սակայն այդ ժամանակներում արդէն կազմուում է հասարակական խմբակը, որն զբաղւում էր ոչ միայն հում նիւթեր ձեռք բերող արդիւնաբերութեամբ, այլ և իր ժամանակի և ոյժերի միմասը նւիրում էր արտաքին առևտուրին՝ իւրաքանչիւր քայլափոխում փոխարկելով առևտուրը աւազակութեամբ այնտեղ, որտեղ կարելի էր այդ:

Այդ զբաղմունքներով նրա համար ստեղծուում են մի

քանի նիւթական առաւելութիւններ, որոնք և անդրադառնում են կայսեր, թագաւորի և իշխանի մօտ առանձին արխատօրատական խորհուրդ կազմելու վրայ, խորհուրդ, որը վերստին կազմուում է արիւնակցական ներկայացուցչներէից, որոնք արխատօրատական ընտանիքների գլխաւորներն էին: Այսպէս էր սենատը Հռոմում, Գերուսը՝ Սպարտայում, Արիօպագը՝ Աթէնքում, գերմանական աւագանիներէ խորհուրդը, հնագոյն ռուսական բոյեարական դուման կամ իշխանի մտերիմ զինուորների խորհուրդը: — Սա է արխատօրատական ներկայացուցչութեան ծագումը:

Ներկայացուցչութեան արխատօրատական կամ արիւնակցական ձևը պահպանուում է բնատնտեսութեան զարգացման երկրորդ շրջանում ևս, այն ժամանակ, երբ հում նիւթեր ձեռք բերող արդիւնաբերութիւնից բարձր է կանգնեալ երկրագործութիւնը: Եւ այսպէս՝ սենատը Հռոմում, նաժ երկրագործութիւնը, թագաւորական պէրների ռուսական բոյեարական դուման, թագաւորական պէրների միջնադարեան ժողովները պահպանուեցին նաև այդ էպօխայում: Գրանց տարբերութիւնը՝ նախընթաց շրջանների հետ համեմատած՝ կայանում էր նրանում, որ դրամագրիւտներէի հիմքի վրայ, որ առաջ ձեռք էր բերում առևտուրով և աւագակութեամբ, հողագործութեան տիրապետութեան ազդեցութեան տակ՝ առաջացաւ նոր, աւելի ամուր նեցուկ, այսինքն՝ հողատիրութիւնը արխատօրատական առանձնաշնորհութիւնների համար: Երկրագործութիւնը, հում նիւթեր ձեռք բերող արդիւնաբերութեան հետ համեմատած, պահանջում է մի քանի բաւական աչքի ընկմեմատած, պահանջում է մի քանի բաւական աչքի ընկնող կապիտալի ծախսումը: Նախնական ժամանակներում զբաղմունքն արտողը, ձկնորսը, կամ մեղաբուծութեամբ զբաղւողը համարեա միանգամայն կապիտալի կարիք չէր ըզգում իր արտադրական նպատակների համար: Դժուար չէր թակարդ շինելը, տէգ ձեռք բերելը, ձկների համար ցանցեր հիւսելը: Մեղրամոմ և մեղր հաւաքելու համար պէտք

էր անտառում գտնել խոռոչաւոր ծառ, որտեղ ապրելիս լինէին վայրենի մեղուները, ոչնչացնել կամ դուրս վռնդել նրանց և վերցնել մեղրի հացը: Սակայն այլ է երկրագործութեան մէջ: Անտառային երկրներում նրանով զբաղելու համար, անհրաժեշտ է այրել անտառը, արմատախիլ անել նրան. հերկել խամ գետինը, ցանել, ցաքանել դաշտը, հնձել և կալսել ցորենը, աղալ հատիկները և այլն: Այդ բոլոր գործողութիւնները պահանջում են բաւականաչափ ժամանակ, հետեւապէս ենթադրուում է, որ երկրագործի ձեռքի տակ սպառման յայտնի պաշար, սնուելու յայտնի միջոցներ պիտի լինեն: Բացի դրանից՝ այդ գործողութիւններն այնքան բարդ են, որ երկրագործական գործիքների՝ խոփերի, արօրների, ցաքանների, գերանդիների կամ մանգաղների և այլն գործադրութեան խնդիրն է առաջ գալիս: Եթէ դրանց աւելացնենք ցանելու սերմի, աշխատող կենդանիների և տնտեսական գործերի համար հարկաւոր շինութիւնների անհրաժեշտութիւնը, այն ժամանակ հասկանալի կլինի հողագործի կապիտալի մէջ զգացած հարկադրական կարիքը: Այն ինչ առանձին գիւղական ընտանիքը իր ձեռքի տակ բաւարար միջոցներ չունէր ամենուրեք իր երկրագործական տնտեսութիւնը յաջող կերպով վարելու համար, իսկ այդ հանգամանքը յաճախ հարկադրում էր նրան հրաժարուել հողից ի դիմաց այն փոխ առած գոյքի, որ ստանում էր աւելի ունեւոր անձնաւորութիւններից: Ահա այսպէս է առաջացել մասնաւոր հողատիրութիւնը՝ արիստոկրատական ներկայացուցչութեան այդ ամուր հիմքը, որին այդ ժամանակ յաջողեց ոչնչացնել այսպիսով նաև արիւնակցական ոչ-արիստոկրատական ներկայացուցչութիւնը, որովհետև նոյն այդ նոր տնտեսական պայմանների ազդեցութեան տակ՝ ոչնչացաւ նաև վէշէն:

Աշխատանքի բաժանման և փոխանակութեան կամ առևտրի վրայ հիմնւած փողային տնտեսութեան ծագումն

ու նրա նախնական զարգացումը միայն առաջին լուրջ հարւածը հասցրին արիստոկրատական ներկայացուցչութեանը: Ճիշտ է, այն ժամանակ արիստոկրատական ներկայացուցչութիւնը չանյայտացաւ, այլ բարդացաւ, ինչպէս շուտով կտեսնենք, ներկայացուցչութեան ուրիշ ձևերով, բայց որքան աւելի էր առաջ գնում փողային տնտեսութեան զարգացումը, նոյնքան աւելի ուժեղ և աւելի խորտակիչ էին դառնում արիստոկրատային հասցրած հարւածները: Եւ դա միանգամայն հասկանալի է, որովհետև փողային տնտեսութեան ժամանակ նախաձեռնութիւն էր պէտք, անհրաժեշտ էր ձեռնարկութեան ոգի—եռանդ, առևտրական փորձառութիւն, ըիտիկ վտանգի ենթարկուում և այլն: Հին արիստոկրատիան մեծ մասամբ չունէր այդ բոլորը և դրա համար էլ ընկնում էր նրա նշանակութիւնը: Ընդարձակ, նոյն իսկ համաշխարհային շուկայի վրայ չափած ձևած ներկայ փողային տնտեսութեան ժամանակ բնականաբար փրկուեցին հին արիստոկրատական ներկայացուցչութեան միայն բեկորները, յանձին անգլիական լօրդերի պալատի կամ աւստրիական ըէյստրատի առաջին կուրիայի, որտեղ մասնակցում են ամենանշանաւոր ընտանիքների գլխաւորները՝ ոչ թէ ընտրութեամբ, այլ ժառանգական իրաւունքով, և կամ յանձին ժառանգական սենատորները Իտալիայում: Որ դա ոչ այլ ինչ է, բայց եթէ հստակեան բեկոր, կարելի է իմանալ նրանից, որ պարլամենտներում աւստրիական և իտալական արիստոկրատական այդպիսի տարրերը սակաւ են, իսկ անգլիական լօրդերի պալատը սակաւ նշանակութիւն ունի, բան համայնքների պալատը: Միայն համայնքների պալատին է պատկանում բիւրջէտային օրէնսդրութեան, այսինքն՝ պետական եկամուտների և ծախսերի, նախահաշի փոփոխման և հաստատման իրաւունքը. իսկ լօրդերի պալատը սահմանափակում է միայն բիւրջէտի ձևական բնութեամբ. նա ոչ

մի փոփոխութիւն չի մտցնում նրա մէջ: Բացի դրանից՝ մինխտրութիւնը անգլխայում միայն համայնքների պալատի առջ պատասխանատու է, այլ ոչ թէ լօրդերի պալատի: Մինխտրութիւնը հրաժարական է տալիս, երբ մեծամասնութիւնը համայնքների պալատում հակառակ է արտայայտում նրա քաղաքականութեանը, մինչդեռ լօրդերի մեծամասնութեան կարծիքը երբէք չի ազդում նրա վիճակի վրայ: Դրան պէտք է աւելացնել, որ լօրդերի պալատն արդէն համարեա միանգամայն էապէս կորցրել է իր զուտ—արխտօկրատական բնաւորութիւնը, որովհետև պէրերից մեծամասնութիւնը արխտօկրատներ չեն, այլ ժառայութեամբ արտօնութիւն ձեռք բերած մարդիկ: Վիկտորիայի թագաւորութեան օրով՝ մինխտրութիւնը համայնքների պալատում ընդունւած, բայց նշանաւոր մարդկանց համար անհաճելի օրինագծերը լօրդերի պալատում անցկացնելու համար սովորաբար նոր պէրեր էր նըշանակում քաղաքական յայտնի գործիչներից և պաշտօնեաներից, կամ խոշոր կապիտալի (Ռօդչիլդ) ներկայացուցիչներից: Վերջապէս՝ շատ պէրեր իրենց զինանիշները ոսկեզօծում էին հարուստ վաճառականների, ֆաբրիկանտների և բանկիրների աղջիկների հետ ամուսնանալով և նւիրւում էին փողային շահագրիտութեանը և զբաղւում արդիւնաբերական նախաձեռնութիւններով: Կապիտալի այդ խառնուրդն պահպանում է լօրդերի պալատը Անգլիայում: Այստեղ ազդում է նաև Անգլիայի հասարակական կեանքի ընդհանուր բնաւորութիւնը. ամեն ինչ այստեղ ընթացել է միշտ աստիճանաբար, առանց թռիչքների, ընդհատումների և կատաստրօֆաների, զեկավարող դասակարգերը զիջումներ էին անում անբաւականներին՝ մասնաւոր ողջումներով ու կօմպրօմիսներով և շատի բաների պահպանումը գնում բաներ, որոնք կապահովէին նրանց գերիշխանութիւնը հասարակութեան մէջ:

1003
12485
23141-60



Այսպիսով բնատնտեսութեան էպօխտը ներկայացուցչութեան միակ ձևը արիւնակցական, արխտօկրատական ներկայացուցչութիւնն էր, որն առաջ էր գալիս ոչ թէ ընտրութիւնից, այլ ժառանգութեան իրաւունքից: Սակայն բնակչութեան աճման հետ՝ բնատնտեսութեան շրջանակներն աւելի ևս անձուկ էին դառնում, մեծանում էր անհրրաժեշտ և օգտակար իրերի պահանջը, որոնց կարիքը աւելի շատ էր զգացւում՝ թէ ըստ բանակի և թէ ըստ յատկութեան—որակի: Այսպիսի հետեանքների կարելի կը լինէր հասնել միայն աշխատանքի բաժանման և զբաղմունքի մասնագիտացման ճանապարհով, և որովհետև իւրաքանչիւր արհեստաւոր կարիք էր զգում նաև ուրիշների արտադրած իրերի, այն ժամանակ նրան ոչինչ չէր մնում անելու, բայց եթէ ծախել իր աշխատանքի աւելորդ արդիւնքը և գնել ուրիշի արտադրած իրերը: Այսպէս էր զարգանում առևտուրը՝ սպառելով փողային լայն գործադրումն և այսպիսով բնատնտեսութեանը փոխարինելու էր գալիս փողային կամ փոխանակական տնտեսութիւնը: Բնատնտեսութիւնից փողային տնտեսութեանն անցնելը չափազանց դժւար է. ամբողջ կեանքը պէտք է նորից վերաշինել, շարքել այն բոլորը, ինչ որ հաստատուել էր դրերով: Այդ ժամանակ բնակչութեան նոյնիսկ բարձրագոյն դասակարգերը զգում էին պաշտպանման, խնամատարութեան և հովանաւորման կարիք. մի ընտանիք իր սեփական ջանքերով անկարող էր յարմարել նոր տնտեսական յարաբերութիւնների բոլոր բարդութիւններին: Եւ անայդ պատճառով կազմակերպւում են դասերը, որոնք իրարից տարբերւում են իրաւաբանական կողմով, մինչդեռ իւրաքանչիւր դասի անդամները միանում են իրար հետ միևնոյն իրաւունքներով և պարտականութիւններով: Այսպիսի ոչ թէ առանձին ընտանիքը, այլ ամբողջ դասային խմբակը միանուու ջանքերով պետութեան աջակցու-

թեամբ յաղթահարում է նորանոր ծագող բոլոր դժւարութիւններին: Այս երևոյթի արտացոլումն է հանդիսանում համբարութիւնների (уехъ) և գիլդիաների երևան գալը: Համբարութիւն էր կոչուում արհեստաւորական այն ընկերութիւնը, որն ընդգրկում էր որոշ արհեստի բոլոր անդամներին և որոշում արտադրութեան բոլոր մանրամասնութիւնները—բանւորների թիւը, արտադրած իրերի յատկութիւնը, աշխատանքի արուեստը և այլն: Գիլդիան առևտրական ընկերութիւն է, որն որոշում է առևտրի մանրամասնութիւնները, նրա տեղը, ապրանքների գները և այլն: Համբարական և գիլդիական ընկերութիւնները միանում և ամբողջութիւն էին կազմում: Հողատիրութիւնը կանոնաւորում էր ձորտական իրաւունքով՝ ապահովելով ինչպէս ազնւական—հողատէրերի շահերը, որոնք նրա օգնութեամբ բանւորական ոյժ էին ստանում, այնպէս էլ գիւղացիների պահանջները, որոնք իրենց աղքատութեամբ առանձին դժւարութիւններ էին կրում փողային տնտեսութեան զարգացման էպօխայում, ենթարկելով իրենց ամբողջ բարեկեցութիւնը խորտակելու մշտական վտանգին և հէնց այս պատճառով էլ՝ առանձնապէս խնամատարութեան և նիւթական աջակցութեան կարիք էին զգում: Գիւղացիները այդ կարիքին բաւականութիւն էին տալիս իրենց անձնական ազատութեան թանկագին գնով, որովհետև ազնւականները շահագրգռւած էին իրենց ձորտերի կեանքի և կարողութեան մի քանի մասերի պահպանման մէջ—ոչխարը խուզելու հնարաւորութիւն ունենալու համար պէտք է միջոց տալ նրան՝ բրգոտելու:

Հասարակութեան դասային այդպիսի կազմի հողի վերայ է և՛ ծագում, և՛ բարգաւաճում դասային ժողովրդական ներկայացուցչութիւնը: Այդ ներկայացուցչութեան տիպիքական օրինակն հանդիսանում են միջնադարեան դասային ներկայացուցչական հիմնարկութիւններն — օրի-

նակ՝ այդպիսի հիմնարկութիւնն են Ֆրանսիական երեսփոխանական ժողովները, գերմանական լանտագները և ռուսական գեմատվային ժողովները: Զարգացման սկզբնական շրջանում, փողային տնտեսութեան դասային ներկայացուցչութիւնը միանգամայն բնական էր, երբ կեանքը դեռ ևս վերաշինուում էր տնտեսական նոր հիմքերի վրայ: Սակայն դասային պատնէշներն անձուկ են դառնում, քայքայւում, ընկնում, և նրանց հետ էլ զառամում օւ խորտակւում է դասային ներկայացուցչութիւնը, շնորհիւ փողային տնտեսութեան աւելի յետագայ զարգացման: Ներկայումս նա աւելի կամ նուազ չափով անաղարտ է մնացել միայն Ֆինլանդիայում և այն էլ շնորհիւ քաղաքական և տնտեսական առանձնայատուկ պայմանների, որոնց մէջ գտնւում է այդ երկիրը: Փողային տնտեսութիւնը Ֆինլանդիայում մեծ շուկաներ չի գրաւում. նա զրկւած է վեհաքանչութիւնից, ընդարձակութեան թափից. այդ պատճառով էլ Ֆինլանդիան հարկադրւած էր պահպանել իր քաղաքական ինքնուրոյնութիւնը, ժամանակաւորապէս դադարեցնել կոնսակցութիւնների կռիւը, միացնելով նրանց մի նպատակի շուրջը: Բայց և այնպէս, Ֆինլանդիայում շատ ուժեղ անբաւականութիւններ են երևան գալիս ընդդէմ դասային ներկայացուցչութեան և ձգտումներ՝ նրան աւելի դեմօկրատական կարգերով փոխարինելու:

Փողային տնտեսութեան զարգացման առաջին աստիճանը—առևտրական կապիտալի առաջանալու և գերիշխանութեան ժամանակն է: Այդ ժամանակում կապիտալն ընդգրկում է միայն փոխանակութիւնը՝ թոյլ կերպով մըտնելով տնտեսական բարիքների նաև արտադրութեան շրջանը: Կապիտալը փողային տնտեսութեան զարգացման երկրորդ շրջանումն է միայն զբաւում արտադրութիւնը, երբ առևտրական կապիտալի փոխարէն առաջ է գալի արդիւնաբերական կապիտալը՝ մտնելով մշակողական, գլխա-

ւորապէս ֆաբրիկային արդիւնաբերութեան մէջ, և բօր-
 սային կապիտալը, որն ընդարձակ կերպով զարգացնում է
 վարկային գործողութիւնները: Միայն այդ ժամանակից է
 սկսում իսկական կապիտալիստական զարգացումը, որի
 առաջին մօմէնտը կրում է սկզբնական դիզման շրջան ա-
 նունը: Այդ ժամանակ առաջին տեղը բռնում է տնտեսա-
 կան մի խնդիր—դրամագուխներ դիզել և յանձնել ար-
 տադրական գործածութեանը: Այդ պատճառով՝ ուժեղ
 կերպով զարգանում է այսպէս կոչւած «տնտեսական ըն-
 կերութիւն» (группировка), այսինքն՝ ձգտումն՝ հիմնելու
 նոր արդիւնաբերական ձեռնարկութիւններ, դրամագուխ-
 ները նրանց ենթարկելու համար:—Աճում է բօրսային
 խաղարկութիւնը, այսինքն՝ տոկոսաբեր թղթերի գնումն
 ու առումը, որոնց բաց են թողնում զանազան բաժնե-
 տիրական ընկերութիւններ, արդիւնաբերական ձեռնարկու-
 թիւններից հսկայական օգուտներ ստանալու համար:—
 Բանւորներն եթէ անկիրթ ու անկազմակերպ են, այդ
 պատճառով էլ ծայրայեղ շահագործման են ենթարկւում
 կապիտալիստների կողմից: Կապիտալը ըէպլ ուժի է փոխ-
 ւում և քաղաքական աիրապետութիւն որոնում, որը և
 արտայայտւում է ցէնզային ներկայացուցչութեան յաղթա-
 նակի մէջ մի յաղթանակ, որի օրով իշխանութիւնը պատ-
 կանում է միայն հասարակութեան աւելի կամ նուազ կա-
 բողութեան տէր՝ ուժեղ տարրերին: Յէնդային ներկայա-
 ցուցչութիւնը գոյութիւն է ունեցել Ֆրանսիայում մինչև
 1848 թ., Գերմանիայում՝ մինչև 1875 թ. և այժմ էլ պահ-
 պանւում է գերմանական առանձին պետութիւններում:
 Ռուսական դեմստովային հիմնարկութիւններն ու քաղաքա-
 յին դումաները, որոնք կազմւած են կարողութեան ցէն-
 զի վրայ՝ պահպանւեցին և նոյն իսկ այդ բնակողութիւնը
 ուժեղացրին 1890 և 1892 թ. օրէնքներից յետոյ, և այդ
 օրէնքների շնորհիւ, դասային սկզբունքի մի քանի վերա-

նորոգումների հետ միասին առաջնակարգ տեղ է գրաւում
 խոշոր հողային և փողային կապիտալի գերիշխանութիւնը:
 Այդ բոլորը հետեանք է սկզբնական դիզման դարեւորմանի,
 որ ապրում էր Ռուսաստանը գիւղացիների ազատութիւ-
 նից յետոյ:

Սակայն սկզբնական դիզման էպօխան, որը միշտ
 ծանր է ժողովրդի համար, արդէն անցել է: Կապիտալիս-
 տական արտադրութիւնը և համայնական ու երբեմն էլ
 համաշխարհային շուկան գրաւած և զարգացած փոխանա-
 կութիւնը բարգաւաճեցին ու յաղթանակեցին: Ի՞նչպէս է
 անդրադառնում դա հասարակական յարաբերութիւնների
 վրայ: Դա ամենից առաջ կեանքի է կոչում հասարակական
 մի նոր դասակարգի—ֆաբրիկային բանւորներին: Փառքի-
 կան դատտիարակում է նրանց մէջ համերաշխութիւն, դա-
 սակարգային ինքնագիտակցութիւն եւ իրենց հոգեկան ու
 նիւթական շահերի երկաթէ զմբնումն*): Բանւորները միա-
 նում, կազմակերպւում են և իրենց դրութեան բարելա-
 մանը ձգտել սկսում—ձգտում՝ աւելացնելու աշխատավար-
 ձը, կրճատելու բանւորական օրը, ապահովելու իրենց ըն-
 տանիքների բարեկեցութիւնը:—Այդ ուղղութեամբ ձեռք
 բերւածները շատ դժւարութեամբ են ստացւում. ծանր
 զրկանքների են հանդիպում և, որ գլխաւորն է, մեծ մա-
 սամբ տարբերւում են իրենց խախտութեամբ, նրանք
 նորից խլում են և առաջ բերում նոր կռուի ու նոր զո-
 հաբերութիւնների անհրաժեշտութիւնը: Ահա այստեղից է
 ծնունդ առնում, հաստատւում բանւորական դասակարգի
 մէջ այն համոզմունքը, թէ անհրաժեշտ է ստեղծել այն-
 պիսի կարգեր և հաստատութիւններ, որոնք կը երաշխա-
 ւորէին նրա սօցիալական յառաջադիմութիւնների կայու-
 նութիւնը: Այսպիսով կենսական, անհրաժեշտ խնդիր է

*) Ընդգծումը իմն է. Թարգմ.

զանունում դեմօկրատական ներկայացուցչութեան հարցը—
 այսինքն՝ ընդհանուր, ուղղակի, հաւասար և գաղտնի քուէ-
 արկութեամբ ժողովրդական ներկայացուցիչներ ընտրելու
 ինչդիրը ընտրութեան ժամանակ: Արդիւնաբերական կա-
 պիտալի նոր ստեղծած բանւորական դասակարգի համար
 միանգամայն անհրաժեշտ ընդհանուր ընտրողական իրա-
 ւունքը համապատասխանում է նաև էպօխայի ընդհանուր
 տնտեսական պայմաններին,—զարգացած կապիտալիզմ՝ ա-
 ռանց ազատ մրցման, առանց իւրաքանչիւր առևտրա-ար-
 դիւնաբերական գործի դաշնագրերի: Իրաւահաւասարու-
 թեան, անհնարին է. նա բոլոր առանձնաշնորհումների, վե-
 րացումն է պահանջում, այն առանձնաշնորհումների, որ-
 ընք ոչ տնտեսական տարրերի խառնուրդով բարդացնում
 են տնտեսական ուժերի ազատ մրցումը: Եւ իսկապէս, են-
 թադրենք, որ լիազօր իրաւասութիւն ունեցող կապիտա-
 լիստը վարձում է մի բանւորի, որը ճորտական կախման
 մէջ է գտնուում մի երրորդ անձնաւորութիւնից: Այդպիսի
 ճորտ բանւորը իր անձնաւորութիւնը տնօրինել լիովին չի
 կարող, որովհետև նրա տէրը կարող է անակնկալ կերպով
 իր մօտ կանչել նրան: Բայի դրանից՝ նա պարտական է
 հողային տուրք (оброкъ) քահրա վճարել իր տիրոջը, որի
 համար էլ մեծանում է նրա պահանջած աշխատավարձը:
 Վերջապէս՝ նրա աշխատանքի պտուղները օրէնքով ոչ թէ
 նրա սեփականութիւնն են կազմում, այլ իր տիրոջը, մի
 հանգամանք, որը թուլացնում է բանւորի աշխատելու է-
 ներգիան—եռանդը: Այդ բոլորը վնասակար է ոչ միայն
 ճորտի, այլ և նրա համար, որի հետ բանւորը պայման է
 կապում: Այսպիսով կապիտալիստօրէն զարգացած հասա-
 րակութեան բոլոր անդամների իրաւահաւասարութիւնն ու
 լիազօր իրաւունքների տէր լինելը հանդէս է գալիս որպէս
 ստիպողական—տնտեսական մի պահանջ, իսկ դրա տրա-
 մաբանական եզրակացութիւնն է հանդիսանում ընդհանուր

ընտրողական իրաւունքը: Ահա թէ ինչու է նա տիրապե-
 տում ժամանակակից առաջնակարգ երկրներում—օրինակ՝
 Փրանսիայում, Գերմանիայում և Միացեալ Նահանգներում:
 Ի՞նչն է առաջացնում երկպալատեան սիստեմը: Մենք
 արդէն տեսանք, որ նա հանդիսանում է ժողովրդական
 ներկայացուցչութեան նոր սկզբունքների և պատմական
 անցեալից ժառանգւած հին սկզբունքների կապակցութիւն-
 ների եզրակացութիւնն ունիտարրական պետութիւններում:
 Այսպէս, Փրանսիական ներկայացուցիչների պալատը—տի-
 պիքական, նոր դեմօկրատական ժողովրդական ներկայա-
 ցուցչութիւն է, իսկ Ֆրանսիական սենատը իսկապէս հին
 ցէնզային սիստեմի բեկորն է, որովհետև՝ թէև սենատում
 ընտրութիւնների համար ցէնզ չէ սահմանւած, բայց սե-
 նատ ընտրելու երկաստիճանութիւնը (մուկիցիպալիտետ-
 ների միջոցով) ապագայ է բերում միայն խոշոր բուրժուա-
 զիայի ներկայացուցիչների համարեա լիակատար իշխա-
 նութիւնը: Դաշնակցական պետութիւններում, որոնք կազ-
 մում են տնտեսական և տերիտօրեալ յարաբերութիւննե-
 րով մօտաւորապէս հաւասարազօր քաղաքական միութիւն-
 ներ, երկրորդ պայտւոր այդ հաւասարազօրութեան արտա-
 ցողումն է հանդիսանում: Բայց եթէ առանձին պետութիւն-
 ները, որոնք մտնում են դաշնակցութեան կազմի մէջ, չա-
 փողանց տարբեր են տնտեսական և տերրիտօրիալ յարա-
 բերութիւններով, այն ժամանակ երկրորդ պալատը աւե-
 լորդ է երևում, որը և մենք տեսնում ենք Գերմանիա-
 յում:

Ժողովրդական ներկայացուցչութեան զանազան ձևերը
 ստեղծող ու սնուցանող ըէալ պայմանների ուսումնասի-
 րութիւնը բերում է այն կարևոր եզրակացութեան, որ
 ընդհանուր ընտրողական իրաւունքը յատուկ է դեմօկրա-
 տական պետութեան, և որ երկպալատեան սիստեմը տեղ
 չունի գուտ դեմօկրատական պետութեան մէջ: Երկպալա-

տեան սխտեմը պատշաճ է միայն վերոյիշեալ պայմաններում գտնուող դաշնակցական պետութիւններում. նա չի սահմանափակում դեմօկրատական սկզբունքը:

Սակայն չափազանց բնորոշ է, որ ժողովրդական ներկայացուցիչական դեմօկրատական սկզբունքից տարբեր խոտորումների պաշտպանութեան համար՝ շատ պատճառներ են առաջ բերում, պատճառներ, որոնք առաջին հայեացքից երբեմն դասակարգային գունաւորումներից զուրկ են երևում և խորթ՝ առանձնաշնորհումների կողմը տենդենցներ ունենալուց: անհրաժեշտ է քննել այդ բոլոր պատճառները և գնահատել նրանց ըստ արժանւոյն:

Իժևար է որևէ բանով արդարացիել արխատօկրատական և դասային ներկայացուցչութիւնը բացի պնդելուց, որ ազնւականները—իրենց ծագումով ազնւաբարոյ կապոյտ արիւն և սպիտակ ոսկր մարդիկ են, իսկ միւս բոլոր դասերը, ինչպէս որ արտայայտել են Ռուսաստանում XVIII դարում, սև ոսկր աստոր մարդիկ՝ կամ գործածենք Փրանսիական հին դարձածքը «Ազնւականութիւնը պէտք է ծառայէ, հոգևորականութիւնը՝ Աստուծոն աղօթէ, իսկ միւս բոլոր անզգամները պէտք է հաբլ վճարեն»: Սակայն արխատօկրատական հպարտութեամբ, կոպիտ էգօիզմով թելադրած և դրա համար էլ ներկայումս ոչ մի վարկով չօգտուող այդ յայտարարութիւնից բացի, այստեղ էլի հիմնընում են այլ պատճառաբանութեան, այսինքն՝ հասարակութեանը կառավարող դասակարգերի քաղաքական փորձառութեան վրայ, որ արտօնեալ դասերը վաղուց ևեթ կառավարում են երկիրը և դրա համար էլ նրանց մէջ զարգացել են որոշ ունակութիւններ, հմտութիւններ, իսկ ամեն մի գործ վարպետից է վախենում: Ահա թէ ինչո՞ւ նաև քաղաքական իշխանութիւնը կենդրոնացած պիտի լինի քաղաքականապէս կրթւած, երկիրը կառավարելու գործում փորձառու հասարակութեան շրջանակների մէջ:

Դրան պատասխանելն էլ չոյնպէս դիւրին է: Բիւրօկրատիան ունի գործը կառավարելու փորձառութիւնը, դրա համար էլ միշտ մտածում է, թէ ինքն է երկրի աղը, իսկ հպատակները սահմանափակ բանականութեան տէր մարդիկ են: Եւ ահա, չնայած դրան, կռիւ է մղում քաղաքականապէս փորձառու՝ հէնց այդ իսկ բիւրօկրատիայի դէմ, և ոչ որ համաձայն չէ գերակշռութիւն տալու նրան կառավարական գործում: Եւ իրողը չէ, որ գործին այդ կերպ են նայում. եթէ մի փորձ կենսունակ աղբիւրից չէ սնուում, ժողովրդական կարիքների գիտակցութեամբ ու դէպի նրանց եղած արթունութեամբ չէ ղեկավարում, դա առնւազը մեռած հնամուտութիւն է (рутина) և դրա համար էլ ոչ միայն ինքնին օգուտ չէ բերում, այլ և ամեն մի քայլափոխում ֆլաստակար է: Ոչ որ չի կարող, ի հարկէ, աւելի լաւ դատել ժողովրդական կարիքների և այս կամ այն անձնաւորութեան դէպի հասարակական պահանջներն ունեցած խղճի մասին, քան ինքը՝ ժողովուրդը:

Կայ կարողութեան (ստացուածքային) ցէնզը արդարացնող մի նկատառում ևս. ասում են, որ հարուստ մարդիկ կերակրում են շատերին օրինակ՝ Փարբիկանտների մասին յաճախ ասում են, որ նրանք կերակրում են այսօրան հազար բանւորի: Բայց այսպիսով մոռանում են ձեռնարկութեան օգուտների, տնտեսական շահերի, նրա գըլխաւոր շարժիչի մասին. դեռ չենք ասում այն մասին, որ արժէք ստեղծող գլխաւոր գործօնը—աշխատանքը՝ սակաւ է վարձատրում, որ նրա գործադրութիւնից ստացւում է յաւելեալ արժէք, որի մի մասը գնում է յեազայ արտադրութեան համար, իսկ միւս մասն կապիտալիստն է ըստ պառում: Յէնզային սխտեմի այդպիսի արդարացումը, ամենալաւ դէպքում՝ կոպտութիւն ու միամտութիւն է, իսկ վատ դէպքում—նա դասակարգային որոշ շահերը

պաշտպանելու գաղտնի հաշիւն ու նենգ միջոցն է ներկայացնում իրենից:

Սակայն՝ եթէ վերացւի ցէնզը, գասայնութիւնը, արիստոկրատիզմը, այնուամենայնիւ երկպալատեան սիստեմը էլի կմնայ, յենուելով ընդհանուր ձայնուութեան տարբեր կօմբինացիաների վրայ: Նոյնիսկ դեմօկրատական պետութեան նկատմամբ այդպիսի սիստեմը պաշտպանելու համար հետեւեալ պատճառներն են առաջ բերում. 1) Երկպալատեան սիստեմը տարածւած է ամենուրեք, բոլոր սահմանադրական երկրներում. 2) Անհրաժեշտ է, որ այն մարդիկ, որոնք անկիրթ մասսայի գործերը կառավարելու համար քաղաքականապէս փորձառու են՝ իրենց համար տեղ գրաւեն վերին պալատում. 3) Առանձին շրջանների շահերը պէտք է բաժանել իրարից, պահպանել տեղային առանձնայատկութիւնները և այդ նպատակով էլ տեղային շահերի ներկայացուցիչներից կազմել երկրորդ պալատը, որը սերտ կերպով կապւած լինի տեղական ինքնավարութեան հետ, 4) Երկպալատեան սիստեմն անհրաժեշտ է տեխնիկական նկատառումների տեսակէտից. նա ապահովում է հասարակութեանը ժողովրդական ներկայացուցչութեան չափազանց յափշտակելուց, որովհետև վերին պալատը յետ կասեցնելու եղանակով ներգործում է ստորին պալատի վրայ. 5) Երկու պալատ եղած ժամանակ ըէակցիան աւելի դժուար կը յաղթի կոնստիտուցիօնալիզմին, քան մի պալատեան սիստեմի ժամանակ, որովհետև կոնստիտուցիօնալիզմն ոչնչացնելու համար՝ առաջին դէպքում հարկադրւած կլինի կռիւ մղել երկու հիմնարկութիւնների դէմ, իսկ երկրորդ դէպքում՝ միայն մէկի դէմ: Այդ պատճառաբանութիւններից առաջինը խախուտ է այն պատճառով, որ ոչ ամենուրեք գոյութիւն ունի երկպալատեան սիստեմը: Դեռ չը խօսելով մանր պետութիւնների մասին, ինչպէս օրինակ՝ Սերբիայի, Յունաստանի, Բուլղարիայի

միպալատեան ժողովրդական ներկայացուցչութիւնը յատուկ է այնպիսի խոշոր քաղաքական օրգանիզմին, որպիսին է գերմանական կայսրութիւնը, ուր օրէնսդրական իշխանութիւնը պատկանում է Ռէյստագին. կայսրութեան կառավարութեան կից դաշնակցական խորհուրդը՝ ըստ կազմի և ֆունկցիաների՝ երբէք երկրորդ պալատ չի հանդիսանում: Նա գերմանական զանազան պետութիւնների գեսպաններից կազմւում և միայն խորհուրդներ է տալիս կառավարութեանը օրինազօծերի մասին, այսինքն՝ օրինազօծեր մըշակող հիմնարկութիւն է հանդիսանում:

Վերեւում արդէն ցոյց տրւեց այն պատճառաբանութեան սնանկութիւնը, որը հաստատում է փոքրամասնութեան առանձնաշնորհումները՝ մասնանշելով նրա քաղաքական փորձառութիւնը: Հնամոլները չը պէտք է մտնեն ժողովրդական ներկայացուցչութեան մէջ. իսկ մեծ մասամբ այն մարդիկ չեն սեանայ քէարկութեան ժամանակ, որոնք իրար հետ միացնում են իրենց քաղաքական փորձառութիւնը, համոզմունքը, կեանքի հասկացողութիւնը և բնակչութեան շահերը: Այսպիսով չի կարելի բացասել ժողովրդական մասսաների քաղաքական փորձառութիւնը. նրանք մասնակցութիւն են ընդունում գիւղական դասային հիմնարկութիւններում և մասամբ էլ այն կազմակերպութիւնների մէջ, որոնք կառավարւում են տեղական ինքնավարութեամբ:

Այժմ անցնենք երրորդ պատճառին, որը յայտարարում է, թէ տեղական ինքնավարութեան օրգանների ընտրած և դեմօկրատական հողի վրայ կազմւած վերին պալատը կհակէ տեղական շահերի վրայ և հասարակութեանը կապահովէ ստորին պալատի կենդրոնական տեսդէնցներից: Այդ նկատառումներին ժխտում է ինքը կեանքը: Բանը նրանումն է, որ կայ վերին պալատ, որը կազմւած է հէնց այդպիսի միջոցով, ինչպէս օրինակ՝ Փրանս-

սիական սենատը: Եւ իսկապէս երևում է, որ սենատը Թրանսիայում նշ պակաս, բան ներկայացուցիչների պալատը, համակած է կենդրոնացման ձգտումներով, և որ երբէք այդ պալատով այնքան էլ չի ապահովուում տեղական ինքնավարութիւնը, շրջանային շահերն ու առանձնաշատկութիւնները: Բայց այդ դեռ քիչ է: Տեղական շահերն ու առանձնաշատկութիւններն իրենց հովանաւորման համար չեն պահանջում առանձին կենդրոնական իշխանութեան օրգան: Այդպիսի կենդրոնական օրգանը նրանց համար միանգամայն աւելորդ է տեղական ինքնավարութեան կանոնաւոր կազմի ժամանակ, մանաւանդ այնպիսի կազմի ժամանակ, երբ տեղական ինքնավար միութիւններն ինքնուրոյն կերպով գործում են օրէնքով սահմանուած իրենց իրաւասութեան (компетенция) սահմաններում, որի օրէնքի խանգարման համար պատասխանատու են միայն դատաստանի առաջ: Հետևապէս առանձին վերին պալատի ոչ մի հարկ չկայ՝ տեղական շահերի առանձնաշատկութիւնների ապահովման համար: չկայ ու դրա համար բաւական է տեղական ինքնավարութեան կանոնաւոր բարենորոգումը:

Սակայն դարձեալ ասում են մեզ, թէ օրէնսդրական տեխնիկան ընդգծում է երկպալատեան սիստեմի անհրաժեշտութիւնը: այդպիսի սիստեմն ապահովում է օրինագծերի աւելի մանրամասն քննումը, երաշխաւորում շտապօղական գործողութիւնից և ամեն տեսակ յափըտակուսմաներից: Իզուր չեն անգամ այն պալատները, որոնք անմիջապէս ժողովրդից են ընտրւում և իրենց միջից կազմում վերին պալատը: Այսպէս՝ Նորվեգիական սահմանադրութեան համաձայն՝ ժողովրդական ներկայացուցիչները կազմում են վերին պալատը իրենց միջավայրում տեղի ունեցող ընտրութիւնների միջոցով և այդպիսով ստեղծում են երկու ինստանցիա՝ բիւջէի և օրինագծերի քնն-

նութիւնների համար: Այս առթիւ նորից չի կարելի չը յիշատակել այն փաստը, որը գերմանական կայսրութիւնը կառավարւում է առանց երկրորդ պալատի, որով սակայն, տեխնիքական ոչ մի տեսակի դժւարութիւններ չեն ստեղծուում: Յետոյ, մի պալատի օրով էլ միջոց կայ չափազանց շտապ վրձիւնները հեռացնելու համար: Դա իւրաքանչիւր օրինագծի երեք անգամ կարգալու սիստեմն է. պալատն որոշ ժամանակամիջոցում երեք անգամ քննում է օրինագիծը: Վերջապէս՝ դժւար չէ ըմբռնել, որ այդ տեխնիկական պատճառաբանութեան տակ անվստահութիւն է թագնւած դեմօկրատիայի վերաբերեալ, և որ գիտակցաբար, թէ անգիտակցաբար ձգտում է երևում՝ կառավարող դատակարգերին իրաւաբանօրէն ձևակերպւած գերակշռութիւն և առանձնաշնորհումներ տալու: Ամենալաւ դէպքում վախենում են այդ նոյն մասսայի մեծ մասամբ կարծեցեալ քաղաքական տիտակութիւնից ու անկիրթ լինելուց, և որ գլխաւորն է, մոռանում են, որ դեմօկրատական սկզբունքի յաղթանակը ինքնին թանգ է, որպէս դատակարգերի շահերի ազատ և օրինաւոր կուրի հնարաւորութեան զբաւական, և որ յանուն դրան կարելի կլինի նոյն իսկ ժամանակաւոր զիջել քաղաքական—յետադիմական հոսանքի գերիշխանութիւնը դեմօկրատական հիմունքներով կազմւած ժողովրդական ներկայացուցչութեան մէջ, գերակշռութիւն, որից, սակայն երկիւղ կրելու բաւականաչափ հիմունքներ չկան:

Վերջապէս՝ կրիտիկայի չի դիմանում առաջ բերուած պատճառաբանութիւններից նաև վերջինը—այսինքն, որ ըէակցիան աւելի դժւարութեամբ կը կուրի սահմանադրական սկզբունքների դէմ երկպալատեան սիստեմի ժամանակ, որովհետև երկու հիմնարկութիւն խորտակելը աւելի դժւար է, քան մէկ: Նոյն իսկ կարելի է հաստատել ձիւղտակառակը: Երկպալատեան սիստեմի ժամանակ ըէակցիա-

յի յաղթանակը ներկայացուցչական կառավարութեան էութեան վրայ աւելի դիւրին է ձեռք բերել, քան միպալատեան: Եւ իսկպէս, չէ որ եթէ բէակցիան կամենում է մակարդակադափօրէն և իմաստաբար գործել, նա առանց առանձին դժուարութեան, իր համար դաշնակից կը գտնի վերին արտօնեալ պալատում, և նրա վրայ յենուելով՝ կարող է յաջող կերպով կուր մղել քաղաքական ստորին պալատի հետ և ուղղակի ոչնչացնել վերջինիս: Մենակ ստորին պալատի ոչնչացումը վերին պալատի աջակցութեամբ կամ առանց նրա աջակցութեան տեւալ դէպքում դա միևնոյն է, այնքան դիւրին է երկպալատեան սխտեմի ժամանակ, որ վերին պալատը կմնայ նոյն իսկ ստորին պալատի ոչնչացումից յետոյ, և այդպիսով կը պահպանուի ներկայացուցչական կառավարութեան սուերը, նրա ձևը, որը հնարաւորութիւն կտայ յետագիւմական հոսանքի ներկայացուցիչներին ցոյց տալու, որ ժողովրդական ներկայացուցչութեան պրինցիպ-սկզբունքը ոչնչացած չէ, և նոյնքան իր կողմն կը գրաւէ ոչ միայն առանձնաշնորհումների կողմնակիցներին, այլ և այն լաւատեսներին, որոնք պատրաստ են քնով բաւականանալու, հաշուելու, միայն թէ այդ քիչը պահպանուած լինի, մոռանալով այդպիսով, որ գործի ամբողջ էութիւնը կորած է, որ դրա հետևանքը կլինի այն, որ իրական ժողովրդական ներկայացուցչութեան տեղ կը մնայ միայն մի ֆիկցիա, վատ փոխանիւթ (սուրբօգտ):

Եւ այսպէս, ընդհանուր, ուղղակի և հաւասար ընտրողական իրաւունքն անհրաժեշտ է դեմօկրատական երկրի համար ոչ միայն նրանում գոյութիւն ունեցող բէակ տնտեսական և սօցիալական ոյժերի յարաբերութիւնն աչքի առաջ ունենալով, այլ և պետական պրակտիկայի տեսնիկական պահանջներին իրակատար համապատասխան լինելու պատճառով: Նախ քան ընդհանուր եզրակացութիւն հանելը, անհրաժեշտ է, սակայն, քննել էլի մի կարևոր

առարկութիւն ոչ սակաւ արտայայտուած ընդդէմ գաղտնի ձայնտութեան: Մասնանշում են, որ այն երկրներում, ուր գրագիտութիւնը քիչ է զարգացած, գաղտնի ձայնտութիւնը անհնարին է բնակչութեան մասսայի մէջ, որովհետև անգրագէտ մարդը չի կարող գրել իր ընտրելի ազգանունը: Սակայն չը պէտք է մոռանալ, որ թեկնածուների թիւը մեծ չի լինի իւրաքանչիւր ընտրողական շրջանում՝ նախընտրական ագիտացիայի ժամանակ. նրանց անունները առանձին բիլէտների վրայ կը բաժանուի իւրաքանչիւր կուսակցութեան կողմից, այնպէս որ ընտրողներն ոչինչ չեն գրի. ծայրայեղ դէպքում իւրաքանչիւր թեկնածուի անունը կարելի է նշանակել պայմանական նշանով—խաչով, ձողով և այլն, մի բան, որ անգրագէտն էլ կարող է անել. վերջապէս, անգրագէտ ընտրողը կարող է իր ընտանիքի գրագէտ անդամների կամ ծանօթների օգնութեանը դիմել: Այդ բոլորը, ի հարկէ, անագին դժուարութիւնների հետ է կապուած, որ նոյն իսկ կարող է ի չարը գործադրուել, բայց այդ բոլորի հետ աւելի հեշտ է հաշուուել, քան հրաժարուել գաղտնի ձայնտութեան վերին աստիճանի բեղմնաւոր սկզբունքից: Իսկ յետոյ՝ չի կարելի մոռանալ, որ քաղաքականապէս ազատ երկրներում ժողովրդական կրթութեան գործը առաջ է գնում հսկայական քայլերով, այնպէս որ, հեռու չէ նաև ընդհանուր գրագիտութեան գործը:

Ենթադրենք, որ մենք ունենք մի երկիր, որը իր տնտեսական զարգացմամբ սկզբնական դիզման շրջանն ապրել ու մտել է կապիտալիստական զարգացման ընդարձակ ուղին: Այդպիսի երկրում խորտակուում են դասային անջրպետները և արիստօկրատական տարրը թուլանում ու յետ է նահանջում յետին պլանը: Իսկ դրան զուգահեռաբար բարձրանում է առևտրա-արդիւնաբերական դասակարգը, մի կողմից ձգտելով իրականացնել իր տնտեսական

տիրապետութիւնը և դեմօկրատական անագին մասսան, միւս կողմից, որ բաղկանում է թւով աճող և բաղաբա- կան մթնոլորտում գիտակցաբար մտածող բանւոր դասա- կարգից, մի դասակարգ, որը չի կարող ապրել առանց իր շահերի ազատ և լիակատար ներկայացուցչութեան, և գիւ- դացիներից, որոնք մասամբ արթնանում և գիտակցաբար վերաբերում դէպի կեանքը, մասամբ էլ ալեկոծւում տա- րերային մղումներով:

Վերջապէս՝ զարգանում և բարգաւաճում է պրօֆէ- սիօնալ ինտելլիգէնցիայի, օրինակ՝ բժիշկների, փաստա- բանների, գիտնականների, հեղինակների, ճարտարապետ- ների, արւեստագէտների, հասարակական հիմնարկութիւն- ներում ծառայողների և այլն, բազմաթիւ խումբը. այդ մարդիկ նոյնպէս ձգտում են օրինաւոր կերպով պաշտպա- նել իրենց շահերն ձգտումներով: Մի խօսքով՝ նկատւում է դասակարգային խիստ ուժեղ հակասութիւններ, որոնց օրինաւոր և խաղաղ կերպով լուծելու համար գոյութիւն ունի միայն մի միջոց—դա բոլորի շահերին բացարձակ կռուի հնարաւորութիւն տալն է օրինական հողի վրայ:

Ժողովրդական ներկայացուցչութեան սրբախի ձևն է համապատասխանում տնտեսական և սօցիալական ոյժերի այդպիսի կապակցութեանը: Ակնյայտնի է, որ ոչ արխա- տօկրատական, ոչ դասային և ոչ էլ ցէնզային ներկայա- ցուցչութիւնը—լինի դա բաց կամ գաղտնի ձևով, միևնոյն է:—Այդ բոլոր պայմաններում, որպէս հետևանք կստացւի միայն մի թագնւած անտագօնիզմ, և որպէս դրա հետև- անք կառաջանայ կռուի, ապօրինի, բռնի ու յեղափոխա- կան եղանակներ:

Եւ այդ բոլորը ունի մի ընական ելք—դա ընդհա- նուր, ուղղակի, հասասար եւ անարդարական իրա- տունքն ու ժողովրդական ներկայացուցչութեան միպալա- տեան սխտեմն է:



Մ Ե Ր Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԳԻՆՆ Է

1. «Փնջիկ» բանաստեղծություններ (սպառ.) 5 կ.
2. «ԿեԱնՔի Մէջ» վէպիկ, (ինքնուրոյն) . 5 կ.
3. «ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՉՈՒԹԵԱՆ
ՁԵՒԵՐԻ ՄԱՍԻՆ» . 10 կ.

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.

Գումարով գնողներին 20% զեղծ:

Գլխաւոր պահեստ՝ «Գ.Ի.Ր» գրախանութում: Կարելի է
ստանալ բոլոր հայ գրավաճարանոցներից:

«Ազգային գրադարան»



NL0195038

15,408